

1.4.2. Բնակչության դրամական եկամուտները և ծախսերը, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը

Բնակչության դրամական եկամուտները 2015թ. հունվար-հունիսին կազմել են 73549.7 մլն դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել են 8.9 տոկոսով: Դրամական ծախսերը նույն ժամանակաշրջանում կազմել են 74173.6 մլն դրամ և ավելացել են 14.3 տոկոսով:

Բնակչության դրամական եկամուտները և ծախսերը

	2014թ. հունվար-հունիս	2015թ. հունվար-հունիս	Բացարձակ աճը, (նվազումը «-» նշանով)	/մլն դրամ/ 2015թ. հունվար- հունիսը տոկոսներով 2014թ.հունվար- հունիսի նկատմամբ
Բնակչության դրամական եկամուտները	67531.4	73549.7	6018.3	108.9
Բնակչության դրամական ծախսերը	64906.4	74173.6	9267.2	114.3
Եկամուտների գերազանցումը ծախսերի նկատմամբ	2625.0	-623.9	-3248.9	x

Բնակչության դրամական եկամուտներն ըստ աղբյուրների

	2014թ. հունվար-հունիս	2015թ. հունվար-հունիս
Ընդամենը եկամուտներ <i>այդ թվում՝</i>	100.0	100.0
Աշխատանքի վարձատրություն	55.7	57.9
Սոցիալական և այլ տրանսֆերտներ	17.3	16.5
Եկամուտներ գյուղմթերքների իրացումից	7.9	9.7
Եկամուտներ ձեռնարկատիրական գործունեությունից	7.4	7.5
Այլ եկամուտներ	11.7	8.4

Բնակչության դրամական եկամուտների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամենաբարձր տեսակարար կշիռն ունի աշխատանքի վարձատրությունը՝ 2015թ. հունվար-հունիսին՝ 57.9 տոկոս, 2014թ. հունվար-հունիսին՝ 55.7 տոկոս:

Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալից 2015թ. հունվար-հունիսին ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար բնակչությունը ծախսել է 61148.7 մլն դրամ (83.1 տոկոս), պարտադիր վճարումների և կամավոր մուծումների վճարման համար՝ 2828.1 մլն դրամ (3.8 տոկոս):

Բնակչության դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը

	2014թ. հունվար-հունիս	2015թ. հունվար-հունիս
Ընդամենը եկամուտներ <i>դրանցից օգտագործվել են՝</i>	100.0	100.0
Ապրանքների գնման	71.6	69.5
Ծառայությունների վճարման համար	12.9	13.6
Պարտադիր վճարների և զանազան այլ մուծումների համար	6.2	3.8
Ավանդների և արժեթղթերի ձեռք բերումների հավելած	2.9	1.8
Վարկերի դիմաց պարտավորությունների փոփոխություն	-1.8	3.5
Այլ ծախսեր	4.3	8.6
Կանխիկ դրամի աճ (+) կամ նվազում (-) բնակչության ձեռքին	3.9	-0.8

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտներ: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած ապրանքների և ծառայությունների սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2015թ. հունվար-հունիսին կազմել են 67676.2 մլն դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 6.9 տոկոսով:

Աշխատանքի վարձատրություն

2015թ. հունվար-հունիսին, համաձայն վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից ստացված տվյալների, տնտեսությունում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 149345 դրամ և նախորդ տարվա հունվար-հունիսի համեմատությամբ ավելացել է 12.8 տոկոսով: Ընդ որում՝ բյուջետային ֆինանսավորում ունեցող հիմնարկներում և կազմակերպություններում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 165878 դրամ և աճել է 15.5 տոկոսով, իսկ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում զբաղվածներինը՝ 135065 դրամ և աճել է 10.5 տոկոսով:

Միջին ամսական անվանական աշխատավարձի տատանումն ըստ տնտեսական գործունեության տեսակների և փոփոխությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ բնութագրվում է ստորև բերված տվյալներով.

Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2014-2015թթ. հունվար-հունիսին

	Միջին ամսական անվանական աշխատավարձ		այդ թվում՝			2015թ. հունվար-հունիսի տոկոսներով 2014թ. հունվար-հունիսի նկատմամբ	2015թ. հունվար-հունիսի միջին ամսական անվանական աշխատավարձը տոկոսներով՝ միջին հանրապետականի նկատմամբ
			բյուջետային ֆինանսավորում ունեցող հիմնարկներում և կազմակերպություններում	առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, որից՝			
	2014թ. # հունվար-հունիս	2015թ. հունվար-հունիս		պետական հատված	ոչ պետական հատված		
ԸՆԴԱՄԵՆԸ	132413	149345	165878	122377	143194	112.8	100.0
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	104957	106057	78086	188515	95353	101.0	71.0
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	256727	291937	-	-	291937	113.7	195.5
Մշակող արդյունաբերություն	95560.8	99143	-	-	99143	103.7	66.4
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	102150	146290	-	147376	134191	143.2	98.0
Ջրամատակարարում, կոյուղի. թափոնների կառավարում և վերամշակում	82421.5	98626	72037	94802	130821	119.7	66.0
Շինարարություն	174480	166679	-	169522	166364	95.5	111.6
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլերի նորոգում	75824.1	73875	-	-	73875	97.4	49.5
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	81065.2	88907	122471	94510	68937	109.7	59.5
Կացության և հանրային սննդի կազմակերպում	67186.4	88732	111854	-	87866	132.1	59.4
Տեղեկատվություն և կապ	165311	174482	102927	124339	207859	105.5	116.8
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	239943	283620	-	-	283620	118.2	189.9
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	92539.7	121166	-	133869	84582	130.9	81.1
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	101877	115700	115132	110458	124799	113.6	77.5

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Միջին ամսական անվանական աշխատավարձ		այդ թվում՝			2015թ. հունվար-հունիսը տոկոսներով 2014թ. հունվար-հունիսի նկատմամբ	2015թ. հունվար-հունիսի ամսական անվանական աշխատավարձը տոկոսներով՝ միջին հանրապետականի նկատմամբ
	2014թ. # հունվար-հունիս	2015թ. հունվար-հունիս	բյուջետային ֆինանսավորում ունեցող հիմնարկներում և կազմակերպություններում	առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, որից՝			
				պետական հատված	ոչ պետական հատված		
Վարչարարական և օժանդակ գործունեություն	83358.9	96025	77309	110547	69564	115.2	64.3
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	201329	231317	231336	135000	-	114.9	154.9
Կրթություն	96431	105736	99737	122929	107480	109.6	70.8
Առողջապահություն և բնակչության սոցիալական ապաստարկում	94873.7	108610	85444	116201	95930	114.5	72.7
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	63110.6	80678	75443	89851	73652	127.8	54.0
Սպասարկման այլ ծառայություններ	89003.5	94324	89462	129035	92676	106.0	63.2
Օտարերկրյա կազմակերպությունների և մարմինների գործունեություն	260104	259035	-	-	259035	99.6	173.4

**Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության հատվածների
ԼՂՀ շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում, 2015թ. հունվար-հունիսին**

/դրամ/

	Ընդամենը	Պետական	Ոչ պետական
Ընդամենը ԼՂՀ	149345	152334	143194
ք.Ստեփանակերտ	166545	184902	132301
Ասկերան	115664	113997	119097
Հաղրուք	91062	91524	89239
Մարտակերտ	162814	102220	240052
Մարտունի	98632	102963	89189
Շահումյան	135176	117453	254847
Շուշի	111008	123098	83779
Քաշաթաղ	132250	118312	198080

**Միջին ամսական անվանական և իրական աշխատավարձերը,
2014-2015թթ. հունվար-հունիսին**

	2014թ. հունվար-հունիս	2015թ. հունվար-հունիս
Միջին ամսական անվանական աշխատավարձ, <i>դրամ</i>	132413	149345
Իրական աշխատավարձը սպառողական գների ինդեքսով, <i>դրամ</i>	125391	142914

Սահմանված նվազագույն աշխատավարձի, միջին ամսական անվանական աշխատավարձի և նվազագույն սպառողական բյուջեի հարաբերակցությունը, 2015թ. հունվար-հունիսին

	Նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը, %		Միջին ամսական անվանական աշխատավարձի հարաբերակցությունը նվազագույն սպառողական բյուջեի նկատմամբ, %
	միջին ամսական անվանական աշխատավարձի նկատմամբ	նվազագույն սպառողական բյուջեի նկատմամբ*	
2015թ. հունվար-հունիս	33.5	87.1	260.2

* Հաշվարկված ՀՀ առողջապահության մախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմով, կառուցվածքով և էներգետիկայով՝ համապատասխան կիսամյակի միջին ընթացիկ գներով